

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գին 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերագործէք հասարակութեանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձինական գործերը. Նամակ Յրանսիրայից. Արտաքին լուրեր.—ՀԵՐԱՊՈՐՏՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՐԱՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՎԵՐԱԳՈՐԾՔԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ

Որքան ուրախալի է տեսնել մատաղա-
հաս ոճրագործին ուղղված և իր ընտա-
նիքին ու հասարակութեանը վերադարձրած
իրեն նրա պիտանի մի անդամ: Անգամ-
հաս յանցաւորների համար հիմնած այն
կոյտիկան, որ գործիւն ունի Թիֆլիսի
մօտ Աւճառ կոչված տեղում, տալիս է
աճող արդիւնք և այնտեղ գետնոված փոք-
րիկ յանցաւորները, իւրացնելով աշխատան-
քը և բարեկիրթ կեանքը, ընտելանում են
կանոնաւոր քաղաքացիական պարապմունք-
ներին:

Վերջին հաշուեւարում, 1899 թուին,
կոյտիկայի դաստակերտում կային 47 անձ,
որոնցից 14 հոգի սովորում էին հիւսնու-
թիւն, 16-ը կոշկակարութիւն և 2-ը դեր-
ձակութիւն, միւսները սովորում էին այ-
գեգործութիւն և բանջարաբուծութիւն:
Աւարտածներից հինգ հոգի ստացան պաշ-
տօն և գնացին իրանց ծառայութեան
տեղերը, միւսները ուղարկվեցին ծնողների
մօտ:

Կիտողութիւնը ցոյց է տալիս, որ դաս-
տակերտի մէջ անցկացրած տարիները շատ
բարեբար ազդեցութիւն են անում սաների
վրա: Վեկարարները աշխատում են երբեք
չը լիշեցնել նախկին յանցաւորներին նրանց
անցեալը և նայում են անգամահասների
դաստակերտում անցկացրած կեանքի վրա
իրեն դպրոցական մի կեանքի վրա: Սանե-
րը, արդարեւ, գործ չենելով օրեկան վեց

ժամ արհեստների վրա, մի և նորն ժա-
մանակ անց են կացնում դասարաններում
չորս ժամ և սովորում են զանազան ա-
ռարկաներ:

Նորհիւ անգամահաս յանցաւորների
գործ գրած աշխատանքի՝ դաստակերտը
ունի գեղեցիկ պարտէզ և ընդարձակ բան-
ջարանոց: Ապագայում, երբ աշողվի ոռո-
գել հողի մեծագոյն մասը, նա կը դառնայ
կանաչաւէտ և ծաղկազարդ մի տեղ, որը
կարող է մի և նորն ժամանակ գործ տալ
աւելի մեծ թւով պատանիների, քան
այժմ սահմանված է:

Թիֆլիսի կոյտիկայի աշողութիւնը պէտք
է դրդի բանալու մեր երկրի միւս մասե-
րում ևս նոյնանման հիմնարկութիւններ:
Անգամահաս յանցաւորը դեռ այնպիսի հա-
սակումն է, երբ նրա մէջ խոր ար-
մատ չէ գցել յանցանքը և ոճրագործու-
թեան ոգին: Նա կարող է կանոնաւոր
կրթութեամբ դեռ ուղղել իրան և վերա-
դառնալ այն հասարակութեան մէջ, որից
նա դուրս է չլորսվել ձախորջ հանգա-
մանների շնորհիւ: Յանցաւորը, ուղղվե-
լով, ոչ միայն իրեն առանձին անհատ
դառնում է հասարակութեան համար պի-
տանի անդամ, այլ և նա չէ կատա-
րում վարակիչ և վնասակար դեր իր շրջա-
պատողների խաւերում: Մի և նորն ժա-
մանակ հասարակութեան համար շատ
թանգ է այն համոզումը, որ նա կու-
տուրական խաղաղ միջոցներով և վերաց-
նելով կոպիտ պատիժները, կարող է ուղ-
ղել յանցաւորին և նրան դարձնել հասա-
րակութեան օգտակար անդամ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ձինական դէպքերը նորից ընդհանուր հետա-
քերթութիւն զարթեցրին դէպի այդ հանգին

Նիէրինների աւազակային շահատակութիւնների
ասպարէզ, ինչ հաւատ կարող էր պահպանել
այդպիսի հոգեւորականութիւնը, որի համար
ոչինչ հոգա ու պարտականութիւն չը կար, բա-
ցի փառամոլ նպատակներով ամենակեղծոտ
գործեր կատարելուց: Դիտողը ակամայ համա-
ձայնում է մեր նորագոյն մերկացողներից
մէկի, Միքայէլ Նալբանդեանի հետ, որ 1860-ա-
կան թւականների սկզբում գրում էր Կ. Պօլսի
«Մեղու» մէջ. «Եթէ հայոց ազգը իր կրօնը
պահելով մնաց աշխարհի երեսին, այդ մասին
շնորհակալութիւն մասնատակաւորութեան, սա
բացառաբար պահպանեց հայրիկ կրօնը: Ազգը
որչպիսի եւս թաղված լինէր խաւար տգիտու-
թեան մէջ, այնու ամենայնիւ, եթէ մի մասը
գիտակցութեամբ, միւս և աւելի մեծ մասը
ֆանատիկոսութեամբ հեռու մնալով մահմետա-
կանութիւնից, պահեց իր կրօնը, հետեւաբար
և ազգութիւնը: Թող հայոց ազգը, իր թա-
գաւորութեան կործանման օրից, ստրկանալ
որ եւ է քրիստոնեայ կառավարութեան, այն
ժամանակ կը տեսնէինք...» *):

Այսպիսի մի դառն խոստովանութիւն արդա-
րացնում են պատմական բազմաթիւ փաստերը:
Փոխադրվեցէ՛ք մտքով Կ. Պօլսի XVII դարի
կէսին, տեսէ՛ք ինչ զարհուրելի դէպքեր էին
տեղի ունենում այնտեղ, դէպքեր, որոնք ա-
նընդհատ շարունակվեցան մինչև XVIII դարի
սկիզբը և որոնք վկայում են թէ բարոյական
ինչ սոսկալի անկման էր հասել հայ ազգը: Տե-
ղափոխվեցէ՛ք Կ. Պօլսից Երուսաղէմ, մտէ՛ք
Գրիգորի գերեզմանին ծառայող հայ հոգեւո-
րականների մէջ, եւ դուք կը արտաբերէք յու-
սահատ իրականութիւնից: Այդ բոլոր իրարան-
ցումները մենք չենք կարող նկարագրել ման-
րամանաբար, ժամանակագրական կարգով:
Բայց քանի որ մեզ հարկաւոր է տեսնել հայ
ազգի կեցութեան պատկերը, մի պատկեր, որ
ցոյց տալ թէ մոտավորապէս ինչ առաջադի-
մութիւն կարելի էր սպասել ազգից, ուստի

*) «Երկու խոսք», Պարիզ, 1861, էր. 27.

պետութեան արեւելեան համեմատաբար փոք-
րիկ հարեւանը—Նապօնիան, Դէպքերի նկարա-
գրութիւններից մենք տեսնում ենք, որ եւս պո-
նացիները ամեն տեղ են, նշանաւոր դեր են
կատարում ոչ միայն զիպոսաթիական, այլ և
պատերազմական գործողութիւնների մէջ. Նա-
պօնիայի ներկան ամենքին գուշակել է տալիս
մի ուժեղ ապագայ, երբ նա Մայրագոյն Արե-
ւելքում մի նոր Անգլիա կը դառնայ: Ամենից
նշանաւորն այն է, որ մի յիսուն տարի առաջ
Նապօնիան նոյնպէս մի Չինաստան էր, փակ-
ված իր մէջ, ինչ աւանդութիւններով ապրող,
նահապետական, անգարագայած: Բայց 60-ական
թւականներից այդ կղզիների վրա ծագում է
եւրօպական լոյսի արեգակը: Մայրագոյն են վե-
րանորոգութիւններ, մօնղոլական ցեղի ներ-
կայացոյցի ժողովուրդը սկսում է եռանդով
իւրացնել քաղաքակիրթ աշխարհի կրթական
և վարչական սիստեմները, հսկայական ջան-
քեր է անում եւ այնքան ընդունակ է գտնու-
վում, որ կարողանում է վերանորոգվել ոտքից
մինչև գլուխ: Այժմ Նապօնիան մի պարլամեն-
տական երկիր է, որ ունի պատասխանատու
մինիստրութիւն, քաղաքացիների անձնական
ազատութիւն, նրանց բնակարանների եւ գրա-
գրութեան անձեռնմխելիութիւն, խզի, խօս-
քի, ժողովների եւ դաշնակցութիւնների ազա-
տութիւն և հանրագրերի ներկայացնելու իրա-
ւունք: Պարլամենտը բացվեց 1890 թւականին,
այսինքն ընդհանուր ընտրութիւն մտցնելու օրից
հաջիւ 30 տարի անցած: Զարմանալի է, որ
Նապօնիայում չը գտնվեցին պահպանողական-
ներ, որոնք վայնասուն բարձրացնէին, թէ ժո-
ղովուրդը պատրաստված չէ, թէ դեռ վաղ է
ընտրողական կարգի մտցնելը, ինչպէս ասում
են միշտ եւ ամեն տեղ հնութեան ստուկ-
ները: Նապօնիան ժողովուրդը ցոյց տուեց,
որ ամբողջ այնքան բուրժու անշարժ մի զան-
գուած չէ, ինչպէս կարծում են նրա անկող
բարեկամները: Հէնց առաջին պարլամենտական
ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը այն-

կը բաւականանալ մի քանի ընտրոչ փաստեր
բերելով այդ կեցութիւնից:

Կ. Պօլսի պատրիարքարանում փառքի եւ իշ-
խանութեան համար բորբոքված մրցութիւննե-
րի մասին խօսելիս՝ մենք տեսնում, որ կղնէն
Գալանուր խոսքում էր պատրիարքական ա-
թոռի վրա նստեցնել իր հաւանած մի հայ վար-
դապետին, բայց աշողութիւն չունեցաւ: Այդ
վարդապետը Թօմա Բերիային էր, որ հար-
կադրված եղաւ իր պաշտպանի նման փախել
Հոսմ: Պատրիարքական թեմականների կողմ-
ների այն աստիճանին էին հասել, որ կուսակ-
ցութիւնները չէին թողնում որ եւ է մէկին
պատրիարք նստել. եւ պատրիարքարանի գոր-
ծերը կառավարում էին զանազան տեղակալ-
ներ՝ աշխարհական ազգային ազաներից եւ նը-
րանց ստրուկ հոգեւորականներից: Այս հան-
գամանքը վրա ուղարկութիւն դարձրեց թիւր-
քայ կառավարութիւնը. հաշվաւոր մեծ վեզիր
Քէօփրիւլու Մէհմէթը, տեղեկութիւններ հա-
ւաքելով, կանչեց պատրիարքանին տիրացած
աղաներից մի քանիսին եւ սաստիկ յանդիմա-
նեց նրանց, ապա եւ բանտ ուղարկեց: Բայց
ոչ թիւրքական բանտը, ոչ մեծ տուգանքները,
որոնց միջոցով ազատվեցան բանտարկվածնե-
րը, չը խրատեցին չափաւոր մեծաւորներին:
Գլխաւոր փչացած այն հանգամանքից, որ
թիւրքայում ամեն ինչ կարելի էր անել
կաշառով, այդ մարդիկ խոստացան տարին
40 հազար փող աւելորդ տուրք տալ (պատ-
րիարքարանը արդէն տալիս էր 100 հազար
փող) կառավարութեան, միայն թէ իրանց չը
հարկադրեն պատրիարք ընտրել:

Բայց կաշառքներ տալը ուրիշներն էլ գի-
տէին: Բերիայի Թօմա վարդապետը, վերա-
դառնալով Եւրօպայից, իր վաղեմի տենչանքը
իրագործելու ետեւից դնաց, նա ընկաւ թիւրք
իշխանաւորների դռները, կաշառքներ բաժա-
նեց առաւօրեան, իսկ կառավարութեան խոս-
տացաւ 140 հազար փող տուրքի փոխարէն՝
տարին վճարել 400 հազար փող, եթէ իրան

պիսի գիտակցութիւն ցոյց տուեց, որ անգլիա-
ցի Նօրման գրում էր. «Անգլիացին կամ ֆը-
րանսիացին կարող է կարծել, թէ Նապօնիայի-
ները պատգամաւորներ ընտրել սկսել են այն
օրից, երբ աստուածները սկիզբ են դրել եւ-
պօնական պետութեան»:

Պետական կազմակերպութիւնը փոփոխելու
հետ—ասում է «Оъв. Куперъ» լրագրում պ.
կիրիլով—միմանց ետեւից նորոգութիւննե-
րն էլ մտցվեցին եւ բոլոր միւս չրջանների
մէջ: Այդ նորոգութիւնները զիպայն նոյն
իսկ կրօնի չրջանին էլ: Փորձվեց մի արհես-
տական նոր կրօն ստեղծել, բայց անաջող ե-
ղաւ փորձը եւ այնուհետեւ եկեղեցին բա-
ժանվեց պետութիւնից. հոգեւորականութեան
տրվող դրամական օժանդակութիւնները վե-
րացան. հոգեւորականների կուսակցութեան
թիւն օրէնքը ջնջվեց. ոչնչացվեցին եւ այն
օրէնքները, որոնք արգելում էին քրիստո-
նէութիւնը: Բայց դրանից, նոր Նապօնիայի
ձակատագրի զիպարները շատ լաւ հաս-
կացան, որ ժողովրդական կրթութեան զար-
գացումը պիտի դառնայ ներքին քաղաքա-
կանութեան առաջնակարգ հոգեւոր մէկը,
որովհետեւ ժողովրդական մասսան հաւատարեցն-
վում է տնային անասունին, որին կրթու-
թիւն տալը բոլորովին ցանկալի չէ: Այս
պատճառով ոչ մի ճիւղի մէջ այնքան տեն-
դային եւ արագ գործունէութիւն չէր նկատ-
վում, ինչպէս այս մի ճիւղի մէջ: Սկզբնա-
կան կրթութիւնը ընդհանուր, պարտադրի
եւ աշխարհական դարձրեց (բայց ոչ ճիւղի)
Բայց Նապօնիան չէ մոռանում զարգացնել
բոլոր աստիճանների եւ տեսակների կրթու-
թիւնը. Գերմանիայից նա վերցրել է ման-
կական պարտէզների կազմակերպութիւնը,
Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգ-
ներից—այնտեղի տարրական եւ բարձրագոյն
զարգացնելի տիպը, Յրանսիրայից—նորմալ
զարգացնելու: Մասնագիտական կրթութիւնը
շատ դէպքերում, կարելի է ասել, փայլուն
կերպով է զրկված: Նապօնիան սկսել է նոյն
իսկ մասնագէտներ տալ ուրիշ երկրներին.
այսպէս, մի քանի եւսպօնական ինժեներներ

կը տան թէ Կ. Պօլսի եւ թէ Երուսաղէմի
պատրիարքութիւնները: Կառավարութիւնը, ի
հարկէ, ընդունեց այդ պայմանը եւ Թօմային
երկու տեղերի պատրիարք նշանակեց: Այդ
յաղթանակը աւելի եւս գրգռեց հայ աղանե-
րին. նրանք էլ սկսեցին կաշառքներ տալ, որ-
պէս զի արդեն Թօմայի պատրիարքութիւնը
Սակայն Թօմայի կաշառքները, ինչպէս երե-
ւում է, աւելի չաղ էին. նրա հակառակորդ-
ները բանտարկվում, ծեծվում էին մեծ վեզիրի
հրամանով, մինչդեռ նա պատրիարքութիւն էր
անում՝ չընկալաւորած թիւրք գիւնդներով,
որոնց ոտնիկ էր տալիս եւ որոնք նոյն իսկ
եկեղեցում էին հեռանում նրանից: Հայ
մեծամեծները ժողով կազմեցին, հայի հա-
մար մի անսովոր միաբանութեամբ վճռեցին
ոչինչ չը խնայել պատրիարքին ոչնչացնելու
համար, չը խնայել մանաւանդ փող: Նրանք
մաշեցին փաշայանի դռները, կաշառքներ ուժ
կարելի էր կաշառել—սկսած ծառաներից: Եւ
երբ տեսան, որ այդ միջոցները քիչ են օգ-
նում, ուղղակի մասնութեան դիմեցին: Նրանք
յայտնեցին թիւրք կառավարութեան թէ Թօ-
ման հայ չէ, այլ ֆրանկ եւ լրտեսութիւն է
անում Կ. Պօլսում: Պատրիարքը բանտարկվեց,
բանտում աւելի հեշտ էր նրա հետ հաշիւներ
վերջացնելը. եւ հայերը կաշառքներ ու ալլ
ստորութիւնների միջոցով սպանել տուին նը-
րան բանտի մէջ: Այնուհետեւ սկսվեցան աւելի
զգուշիկ արարքներ: Պատրիարքի դիակը եր-
կու օր ընկած էր բանտի մօտ եւ վայրենի ու-
րախութիւնների առարկայ էր դարձել. շատե-
րը օտով խփում էին փառափրօթեան զոհ
գնացած վարդապետի գլխին, թքում էին նրա
վրա: Յագեցնելով բարբարոսական վրէժխնդ-
րութեան ծարաւը, հայերը կաշառքներ բան-
տապետին եւ անպատճառ դիակը ծովը գցել
տուին: Բացվեց նոր տեսարան: Եւ թաւալ-
վում էր նա ջրերի երեսին—տոտու՜ է պատ-
միր *).—Եւ նրա գիտաւոր գլուխը ծփում էր

*) Չամչեան, Գ., էր. 675.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ *)

Երբ խօսք է լինում քրիստոնէութեան ա-
նունը արատաւորողների, եկեղեցու նշանակու-
թիւնը ոչնչացնողների մասին, ամենից առաջ
հրապարակ են գալիս հէնց այդ իսկ եկեղեցու
պաշտօնեաները: Նախքան այդ գլուխներում մենք
բաւական խօսեցինք թէ ինչպէս եւ որքան էր
հայոց եկեղեցին նահատակվում փչացած հո-
գեւորականութեան ձեռքեր: Առաջ տանելով
մեր պատմական տեսութիւնը, մենք այժմ նո-
րից հարկադրված պիտի լինեք տեսնել կղե-
րական խառնադրութիւնների աւելի եւս զը-
ղուելի տեսարաններ: Դա պատմագրողի մի
ախուր պարտականութիւնն է, որից խուսա-
փել, դժբախտաբար, չէ կարելի, քանի որ հայ-
կական կեանքի մէջ միայն այդ խռովութիւն-
ներն ու անկարգութիւններն են երեւում եւ
չէ կան ուրիշ երեւոյթներ, որոնք աւելի նշա-
նաւոր լինէին, աւելի տեւողական, համազ-
գային:

Ազգի անցկացնելով XVII դարի յիշատա-
կարանները, մարդ չէ հասկանում թէ ինչ հրաշք
էր, որ մնաց եկեղեցին, մնացին հայ հաւատա-
ցեալներ: Սրբութեան ինչ հասկացողութիւն
կարող էր պահպանել եկեղեցին, երբ նա հա-
մարեա ամեն տեղ զարձակ էր վեղարաւոր եւ-

*) Ներկայից բացակայութեան պատճառով ներկայ
բանտարկանների տպագրութեան մէջ չի տպւում
է ապագայը. «Մշակ» № 145-ի մէջ տպւում է հայկա-
կան տպագրութեան շարունակութիւնն է № 158-ի
բանտարկանի երկրորդ սինակը, սկսած ժողովին
մէջ: Եւստի խօսքերից, Դրանից լուրջ գալիս է №
174-ի բանտարկանը, այդ բանտարկանի շարու-
նակութիւնն է № 156-ի բանտարկանը, մինչև №
158-ի բանտարկանի երկրորդ սինակը (մինչև №
158-ի բանտարկանի երկրորդ սինակը հետեւում է
ներկայ բանտարկանը): Դրան արդէն հետեւում է
ն. Խ.

չառ կարեւոր եւ մեծ ուժերը ունենող տեղեր են գրաւուած ամերիկական երկաթուղիներում կանանց կրթութիւնը նոյնպէս չէ մոռացվել եւսպոնական բէֆօրմատորներ կողմից:

Տնտեսութիւնը, արդիւնաբերութիւնը, ինչ խօսք, առաջ են գնում ընդհանուր զարգացման հետ զուգընթացաբար: Յօդուածագիրը, նայելով Եւրոպայի ապագային, տեսնում է նրան ծայրագոյն Արեւելքը լուսաւորողի եւ Զինաստանը վերանորոգողի, թարմացնողի եւ դէպի նոր կեանք տանողի դերում:

Եթէ նոյն իսկ Զինաստանը, այս հնադոյն քաղաքակրթութիւնն անշուք, հարկադրւած է մտնել համաշխարհային զարգացման ճանապարհը, ուրեմն այդ ճանապարհի վրա վերջնականապէս կանգնած Եւրոպային մնում է միայն առաջ գնալ, ձեռք ձեռքի տուած առաջաւոր ազգերի հետ: Վերջին տասնամեակների ընթացքում տեղի ունեցած առաջադիմական հասարակական բէֆօրմները բնաւորութիւնը թող է տալիս ենթադրելու, որ այդ շարժումը կը կատարվի փոքր ի շատէրնական կերպով եւ հաւասարաշարժութեամբ, առանց յետույեան գնալու ամեն անգամ մի քաջ առաջ գնալուց յետոյ, ինչպէս այդ շատ յաճախ է պատահում ցամաքային Արեւելքում:

Ան ազդեցիկը, թէ ինչու մի քառասուն տարվայ ընթացքում Եւրոպայի հասարակական եւ մտաւոր զարգացման այն աստիճանին, որ այսօր Եւրոպական մեծ պետութիւնների բարձակիցն է Արեւելքին վերաբերող համաշխարհային հարցեր լուծելու մէջ: Գաղտնիքն այն է, որ մի ժողովրդի ազատ զարգացումը նրա առեւտրային ոյժն է:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Եւրասիական» ըստ է. Օմէլյուի. թարգմ. Պ. Հովսեփանցի, հրատարակութիւն Քիֆիւսի հայոց Հրատարակչական ընկերութեան. 64 էր. գինը 10 կ. Քիֆիւս 1900

I

«Եւրասիական» մի ընկերակալ աղկալայ պատմութիւն է: Թշուառ երեխային որդեգրում են թշուառ մարդիկ, որոնք այնքան աղքատ են, որ բարեգործութիւնը չապրութիւն պէտք է համարեն իրանց համար:

Պատմութիւնը գրւած է ըստ է. Օմէլյուի: Մենք ծանօթ չենք լինելու բնագրին. թարգմանութիւնը առեւտրային փոխադրութիւնից է արած, եւ մենք կարող ենք խօսել միայն այդ փոխադրութեան մասին, որ թող է, մեր կարծիքով, ընթերցողի մէջ նա այն պոփոկ չէ զարթեցնում կարեկցութիւն եւ յարգանք դէպի թշուառութիւնը, որքան, ակներեւ կերպով, նպատակ է ունեցել զարթեցնել հեղինակը: Մեզ վրա գոնէ այդ պատմութեանը ա-

պիւքները մէջ՝ Ղալաթիայի եւ Ստամբուլի մէջնաղբ. եւ տեսնողները սաստիկ նախատում էին հայերին, այնպիսի բաներ էին առում, որոնց չէր կարող տանել ակննդը (1658):

Ան թէ ուր էր հասցրել պատրիարքական աթոռի հետ կապված իշխանութիւնը, որ կեղեքելու, յափշտակելու հնարաւորութիւն էր տալիս թէ հոգեւորականին եւ թէ աշխարհականին: Բայց այդ արհնատ դէպքը դեռ երկուցների սկիզբն էր: Վանեցի թըլթըլ (թոթովաթոս) անուանված Աստուածատուր քահանայն հանդիսացաւ Թոմա պատրիարքի մահվան վրէժնիցիւր եւ կազմեց իր կուսակցութիւնը, որ կոչվեց թըլթըլներն: Այդ կուսակցութիւնը այնքան ուժեղ ու ճարպիկ էր, որ երկար ժամանակ կարողացաւ խռովարարի խոչոր գեր կատարել: Նա էր, որ կատարելութեան ակաւորին հասցրեց Թոմա վարդապետի վրա գործադրած եղեռնագործութիւնը եւ պատիժ խնդրեց. բայց նա ինքը օրինաւորութեան ու կարգի կուսակցութիւն չէր, այլ նոյն հաւատահարութիւնների, կեղեքումների վայրենի եռանդով լի մի հրոսակ: Մեծ վէճերից հրաժարն ստանալով, թըլթըլները սկսեցին խուզարկութիւններ՝ պատրիարքի սպանութեան պատճառ դարձած աղանդների բռնելու նպատակով: Աղանդներ թագնւում էին, իսկ թըլթըլները նրանց ծանօթներին ու բարեկամներին էին բռնում եւ արձակում էին, խոչոր տուգանքներ ստանալով: Դա մի չափաւէտ գործ էր. Թոմա վարդապետի մահը երկրորդական նշանակութիւն ստացաւ, եւ այդ հայ եկեղեցիները եւ ձերբակալելու, որ նրանց նիւթական շահ էր տալիս: Աւելորդ է ասել, որ այդպիսի միջոցով յափշտակած փողերի մեծ մասը թըլթըլները կուտում էին թիւրք իշխանաւորների եւ զինուորների կողմից: Յանդիմութիւնը եւ անիշխանութիւնը այն աստիճանին էր հասել, որ թըլթըլները կազմակերպեցին կանոնաւոր աւա-

ւելի սանտիմէնտալ գրուածքի տպաւորութիւն գործեց:

Թարգմանութիւնը վատ չէ: Կան անհարթութիւններ, որոնք ակներեւաբար առաջ են եկել առեւտրային շատ լաւ չը հասկանալուց: Բայց դրա փոխարէն գրքովը լի է գեղեցիկ ժողովրդական դարձուածքներով, իսկ այդպիսի դարձուածքներն են, որ համ ու հոտ են տալիս լեզուին:

II

«Մաքսիմա» Կ. Մ. Ստանիսլովիչի. թարգմ. Ս. Միխայիլան. հրատարակութիւն Քիֆիւսի հայոց Հրատարակչական ընկերութեան. 58 էր. գինը 15 կոպէկ, Քիֆիւս 1900

Ստանիսլովիչ ամենահամալրելիներից մէկն է ուսն երկրորդական տաղանդների մէջ: Մովը եւ ծովագնացների կեանքը—նրա մասնագիտութիւնն են:

«Մաքսիմա» մի խափշիկ երեխայ է: Նրան ազատել են նաւաբեկութիւնից յետոյ ուսն նաւաստները: Նրանք են գրել նրա անունը «Մաքսիմա» Առաջ նա գերել է եղել գերեւ-վաճառ նաւի վրա:

Պատմութեանը ունի ուսն վիպագրութեան բոլոր առանձնատուր արժանաւորութիւնները—պարզ, անպաճոյճ ոճ, խուսափում է ֆէֆէկաներից, բարեխիտ իւժօր, խորին մարդկայնական վերաբերմունք դէպի բոլոր երեւոյթները, հոգեբանի սիրառատ, խորաթափանց հայեացք, որ գտնում է «աստուածային կայծեր» արձամարվածների մէջ, ինչպէս այս դէպքում Լուչկինի նման հարեցողի եւ «Մաքսիմալայի» նման հալածված, ճնշված խափշիկի մէջ:

Թարգմանութեան լեզուն, որ տեղ-տեղ ծանր է, ընդհանրապէս բաւարար է:

Յանձնարարում ենք «Մաքսիմա» ընթերցողներին առանձին ուշադրութեան:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 12-ին

«Մշակ» № 168-ում կարգացի պ. Կարա-Մուրզայի քննադատութիւնը պ. Երեցեանի եւ իմ տուած համեմատման, որտեղ մի քանի անշուք նկատողութիւններից թող էր տուել իրան մի քանի անտեղի զրպարութիւններ բարդել ինձ վրա:

Միակ նկատողութիւնը, որ արել էր պ. Կարա-Մուրզան, այդ այն է, որ դաշնամուրը լրիւ չէր կատարում իր դերը. բայց ոգեւորվել եւ թողնել ամբողջ խումբը բաղդի բերնութեան, որ պ. Կարա-Մուրզայի հետ շատ անգամ է պատահել, դա էլ ցանկալի չէ: Երկրորդ՝ որքան էլ ձեր դաշնամուրը հրաշքեր գործէ, այնու ամենայնիւ չի փոխարին մարդկային ձայնին: Դաշնամուրը չէ կարող արտայայտել մար-

դարութեան գործը: Նրանց եկեղեցու մի մասը այրված էր. պատճառն անհայտ էր: Ժողովուրդը քիչ էր գալիս կիսով չափ այրված եկեղեցին, հետեւաբար արդիւնք քիչ է ստացվում, նրանք պայմանաւորվեցին բոստանների կաշված գինեւորների հետ եւ գործի կպան: Զինուորները բռնութեամբ եկեղեցի էին բերում պատահած հայերին, որոնց այդտեղ թաւաւում էին թըլթըլները: Այդ էլ քիչ թաւայ այդ վայրենիներին. գիւղերը նրանք, միացած գինեւորների հետ, մտնում էին տները, անմեղ մարդկանց դուրս էին քաշում իջը: Թէ արքունի հրամանով ձերբակալելու համար, ծեծուած, տանջուած էին խեղճներին եւ ստանում էին, ինչ ուզում էին:

Մինչդեռ Կ. Պոլսի հայութիւնը ծփում էր այդ խռովութիւնների մէջ, Երուսաղէմում յոյները մեծ կաշառքների միջոցով խելոյն հայերից ու Յակոբի վանքը: Դա էլ մի նոր դժբախտութիւն էր ժողովրդի համար: Հայերն էլ պիտի մեծ կաշառքներ տային, որպէս զի կարողանային յետ խել իրանց դարաւոր սեփականութիւնը: Աստուածատուր պատրիարքը Կ. Պոլսում արդարութիւն էր աղերսում թիւրք պաշտօնեաների մօտ, բայց իզուր. իսկ Նդիւազար Այնթապցի վարդապետը նոյն նպատակով աշխատում էր Երուսաղէմում. նա հայոց վանքում գտաւ ոսկու եւ արծաթի մեծ գումար եւ ուղարկեց Կ. Պոլիս՝ մեծ վէճերին եւ ուրիշ պաշտօնեաներին կաշառելու համար: Բայց պոստիցիները այդ ժամանակ այնքան էին խռովաւորվել թոմա պատրիարքի սպանելու գործի մէջ, այնքան դժգոյսով էին փոխադարձ թշնամութիւնների մէջ, որ Երուսաղէմի գործը մոռացվեց, իսկ ու Յակոբի համար ուղարկված գումարը վատնվեց Թոմա պատրիարքի սպանութիւնը արդիւնքների համար: Հնչում է երեւակայն թէ ինչ դրուական հասած պիտի լինէին Կ. Պոլսի հայոց եկեղեցիները. այդքան փողերը, որ կուտող կողմերը անխնայ վատնում

դուս հոգեկան վիշտը, սրտի կսկիծն եւ ուրախութիւնը այն կատարելութեամբ, ինչպէս կարող է արտայայտել մարդկային ձայնը: Եւ ես ամեն կերպ աշխատել եմ, որ խումբը քաջ գիտենայ իր դերը, որ նա կատարէ ոչ թէ պատիւի դեր, այլ ակտիւ դեր:

Այս նկատողութիւնից յետոյ պ. Կարա-Մուրզա անցնում է այն հարցին, թէ ես խումբը կազմակերպելու համար բոլորովին աշխատանք չեմ գործ գրել: Դա միանգամայն անարդար վկայութիւն է. ես խմբի հետ անցել եմ 11 երգ, կարծում եմ, որ այդ երգերը անշուք-լու համար իրանց նիւանանքով հարկաւոր էր ժամանակ, եւ ես ուղիղ երեք շաբաթ ջանք եմ գործ գրել եւ աշխատել, որքան կարելի է աշուղ խումբը կազմել: Անշուշտ ամեն մի գործ ունի իր պակասութիւնները եւ ես ազատ չեմ եղել մի քանի պակասութիւններից: Նա չէ սխալվում, ով ոչինչ չէ անում:

Պ. Կարա-Մուրզան ասում է, որ իմ համերգին մասնակցող երգիչները նրա խմբի անդամներն են: Բայց ես կասեմ, որ խումբը ոչ պ. Կարա-Մուրզային է պատկանում, ոչ ինձ եւ ոչ մի երրորդի: Խմբի անդամները, իբրեւ մի-մի անհատ, գալիս եւ մի են խմբում, մի ընդհանուր գործին ծառայելու համար: Այս էլ ասեմ, որ խմբի մեծ մասը եղել են ներսիսեան զբոսայի նախկին եւ այժմեան աշակերտներ: Պ. Կարա-Մուրզայի մօտ soprano-ները իմ խմբում կատարել են Alto-ի դերը:

Գալով այն հարցին, թէ ես երկու երգ եմ վերցրել պ. Կարա-Մուրզայից առանց յիշելու նրա ազդեցունքը, կասեմ, որ այդպէս պատահել է այն պատճառով, որ չէի կարծում, թէ այդ չափ անարկիւրիտ մարդ կը լինի պ. Կարա-Մուրզան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, այն արծաթի դրամները, որոնք ծակծկված են եւ վնասված, չեն ընդունում պետական գանձարանի կողմից: Այժմ պաշտօնապէս կարգադրված է, որ գանձարանը պարտաւոր է որոշ գիշումով ընդունել այդպիսի դրամներ: Այդ գիշումը պէտք է լինի հետեւեալը: 1 բուրժանոցը պէտք է արժենայ 65 կոպէկ, 50 կոպէկանոցը 32, 25 կոպէկանոցը 16 կ., 20 կոպէկանոցը 6 կ., 15 կոպէկանոցը 4 1/2, 10 կոպէկանոցը 3 կոպէկ:

Ռուսաց աստղաբաշխական ընկերութեան մէջ ներկայումս հարց է յարուցված լինալիս դիտանող վերակազմելու համար Աբասովեանում, որը իր օդի զարմանալի մաքրութեամբ առաջինն է Եւրոպայում:

Սուրբ գիրքը տարածող ընկերութիւնը Ռուսաստանում, մայրաքաղաքի լրագրողների խօսքով, այս օրերս Օդեսայի վրայով Սախալին կղզին է ուղարկում տասը հազար օրինակ

էին կաշառքներ, տուգանքներ տալու համար, ծանր տոկոսներով պարտք էին վերցրած օտարներից եւ վերջ ի վերջոյ ժողովրդից պիտի հանվէին: Երբ եկաւ վճարման ժամանակը, վէճեր ու կռիւներ բարձրացան այդ առիթով: Պարտքի մի մասն էլ Երուսաղէմի վրա էր գրված. բայց թէ Աստուածատուր պատրիարքը, թէ Նդիւազար վարդապետը, որ նոյնպէս Կ. Պոլսի էր եկել, հրաժարվում էին մի փող անգամ տալուց: Վէճերը ամիսներ տևեցին. գանգաւորներ արվեցին կառավարութեան, եղան հարց ու փոքեր, ժողովներ կազմեցին եկեղեցիներում. բայց ամեն տեղ—թէ կառավարութեան դիւանատներում, թէ եկեղեցիներում, թէ հրապարակում մի եւ նոյն խայտառակ իրողութիւնը էր տիրում: Վիճողները երկու մասի էին բաժանված. մէկը ասում էր թէ պարտքերը պիտի հատուցանեն այն մարդիկ, որոնք սպանել են տուել Թոմային, իսկ հակառակ կողմը պապացուցում էր, թէ սպանութիւնը կատարված է ամենքի համաձայնութեամբ, ուստի ամենքն էլ պիտի հատուցանեն այդ ոճիւրի համար ծախսած փողերը: Հինգ ամիս վիճելուց, միմեանց օձիք քաշելուց, միմեանց մատնելուց յետոյ, վերջապէս հաշտութիւն կայացրին կողմերը. բայց հաշտութիւնը կարող էր ջնջել անբարոյական իրողութիւնը—այդ հասարակական սառն դատողութիւնները, վէճերը մի մարդասպանութեան մասին, որ կատարվել էր լոկ այն պատճառով, որպէս զի մի անբարոյական Թոմայի տեղ իշխեն տասնեակ անբարոյական կեղեքիչները...

Հազիւ մի կերպ վերջանում է այդ սպանութեան ամօթալի պատմութիւնը, եւ ահա պատրիարքարանի մշտական իրարանցումների մէջ գլուխ է բարձրացնում Մարտիրոս վարդապետ Կաֆայեցի եւ փողովաւում է պատրիարքութիւնը: Մի տարուց յետոյ նրան գահնկէց է անում Ղազար եպիսկոպոսը, տալով կառավարութեան մեծ կաշառք: Բայց նա իր գնած փառքը միայն երկու տարի կարողացաւ վայել-

սուրբ գրքերից՝ ձրիապէս բաժանելու տաժա՛նակիւր աշխատանքներին դատապարտվածներին եւ աքսորականներին:

Մայրաքաղաքի լրագրողները հաղորդում են, որ կարճ ժամանակից յետոյ կը լրանայ պ. Բօբորիկինի գրականական գործունէութեան քառասնամեակը: Այդ յօդուածին համար Պետերբուրգում արդէն սկսել են եռանդուն կերպով գործել: Կայսերական Ալեքսանդրեան բեմի վրա յօդուածներ օրը կը ներկայացվի Բօբորիկինի առաջին գրամատիական գրուածքը: Ապա կը կազմակերպվի մի ժամանադուր, որը պէտք է ձևակէ յօդուածին պատիւներ մատուցանելու պրօգրամը: Արտասահմանց տեղեկութիւններ ստացվելին մի քանի գրականական, գեղարուեստական եւ արտիստիական ընկերութիւններից, թէ նրանք եւս նոյնպէս կը կամենային ժամանակեղ Բօբորիկինի յօդուածին:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ յուլիսի վերջին Զինաստան ճանապարհ ընկած իշխան Էսպեր Ուխտումսկի հասել է Շանհայ:

Թիֆլիս ժամանեց Երեւանի նահանգապետ Կոստ Տիգլանուհեան:

Արծաթը, որ հաւ մի քանի տարուց ի վեր է ժամանում էր, այժմ սկսել է թանգանալ եւ այժմ 30%-ով աւելի թանգ է, քան անցեալ տարի: Այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունի այն երկիրների համար, որտեղ ընդունված է արծաթի դրամը, օրինակ Պարսկաստանում:

ԲԱՅՈՒՄԻՍ մեղ գրում են, «Այսօր, սեպտեմբերի 16-ին, Կիսպական» ընկերութեան գրասենեակի ծառայողներից մէկը, հանդիպելով օրիորդ Մ.-ին, որ կառքով վերադառնում էր Բուզովնա ամարանոցից, յարձակվում է կռուել վրա, նախ օրիորդին է գնդակահար անում եւ ապա իրան. երիտասարդը մեռնում է, իսկ օրիորդի դրութիւնը անյուսալի է: Գնդակը անցել է կրծքի աջ խորշը: Պատճառը, ինչպէս ասում են, մերժված սէրն է եղել:

ՇՆՀԻՐ գիւղից մեղ գրում են. «Մեր Զանգեզուրի գիւղերում մեծ կարօտութիւն է. գիւղացիները նոյն իսկ դարու հացը մեծ դժուարութեամբ են ձեռք բերում. ամբողջ մի տարի նրանք քրտինք թափեցին Աստուծուն աղաչելով, իրանց արտերը քաղահանքին, բայց վերջին անձրեւային եղանակները բոլորը ոչնչացրին, այնպէս որ բոլոր գիւղացիները (չառ քիչ բա-

լել. էջմիածնից նուիրակ է գալիս Յովհաննէս անունով մի վարդապետ, որ հաւաքած նուէրները, փոխանակ էջմիածին ուղարկելու՝ տալիս է մեծ վէճերին եւ պատրիարքութիւնը խլում է Ղազարից, բանտարկել տալով վերջինիս թըլթըլներին միջոցով: Բայց Յովհաննէսի երջանակութիւնն էլ երկարատեւ չէր. Երուսաղէմի նուիրակ Սարգիս վարդապետը Դրիմում իր հաւաքած նուէրներին մեծ մասը ուտում է. Եղիազար վարդապետը հարկադրում է նրան տոկոսով փող վերցնել օտարազգիներից եւ վճարել Երուսաղէմի պարտքը: Սարգիսը այդպէս էլ անում է, եւ երբ պարտատէրերը սկսում են նրան սատակել նեղել, նա գնում է Կ. Պոլիս, որպէս զի մի ճար գտնէ, բայց այդտեղ բանտարկվում է: Մի տարուց աւելի մնալով բանտում, ճարպիկ վարդապետը կարողանում է օտար վախառուների հետ կապվել, փող է վերցնում անաղին տոկոսներով, ազատվում է բանտից եւ ուղղակի գնում է մեծ վէճերի մօտ, կաշառքներ է տալիս եւ դառնում է պատրիարք: Տոկոսները խեղդում են խեղճին, ժողովրդից ստացված քիչ էր եւ պարտատէրերը իրանց ծառաներով ու ձիւներով ապրում էին պատրիարքարանում, ծծում էին իրանց պարտականին: Այդպիսով քիչ է. պատրիարքը լուր է անում, որ իր գլուխը Յովհաննէսը չէ ուղում յաղթված մնալ. թըլթըլներին ձեռնաւորութեամբ նա կաշառքներով ապաւնում է մեծ վէճերին, որ այդ ժամանակ պատերազմի էր գնացել գերմանացիներին դէմ: Յովհաննէսն էլ գնաց զօրքի հետ եւ երկար ժամանակ դեղերում էր մեծ վէճերի բանակում. վերջը վերադարձաւ Ադրիանուպոլիս: Այդտեղ գնաց եւ Սարգիսը, որպէս զի արգել էր հակառակորդը ջանքերը օսմանեան բանակում երկու փառաւոր վարդապետները ընդհարվում են միմեանց հետ, բայց յաղթվում է Սարգիսը եւ Յովհաննէսը նորից պատրիարք է դառնում:

(Կը. շարունակվի)

ցառութեամբ) առիպված են արանից-արանից պարտք վերցնել եւ գնալ Սիւնիան կամ Դարա-բաղ թէ սեւրսի եւ թէ ուտելու համար ցորեն բերելու Գիւղացիները միակ յոյսը մնացել էր այդքանի վրա, որոնք ժողովրդի եկամուտները զիջաւոր աղբիւրն են հողագործութեանը յետոյ բայց, դժբաղդաբար, արանից մի քանի օր առաջ տարածվեց «հեր-դարա» կոչված հիւ-ւանդութիւնը, որից խաղողի ողկոյնները չորա-ցան որթերի վրա, Այժմ խեղճ գիւղացին ար-ցունք թափելով, կուրծքը ծեծելով ուղարկում է Բագու կամ այլ տեղ փող վաստակելու համար իր որդեկերանցը, որպէս զի կարողանայ պարտ-քից ազատվել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Ռուսաց համակրելի ամառգիրներէ մէկը— «ԽՄՅԵ» —օգոստոսի համարում հետեւեալ դա-տողութիւններն է յայտնում չինական հարցի վե-րաբերմամբ: Առաջ բերելով վիճակագրական տե-ղեկութիւններ վերջին հինգ տարիների ընթաց-քում Չինաստան ներմուծված եւրօպական ապ-րանքների ահագին քանակութեան մասին մի կողմից եւ միւս կողմից մասնաւոր աւելորդ ուսումնական ապրանքների այն չնչին քանակու-թիւնը, որ նոյն տարիների ընթացքում ներ-մուծված է Չինաստան «ԽՄՅԵ» գրում է. «Առաջին եւ ամենազիջաւոր եղբակցութիւ-նը այդ թւերից անվիճելի պարզութեամբ ա-սում է մեզ, որ ոչ թէ խօսել, այլ նոյն իսկ երազել դադարաբար Չինաստանը արտաքին վաճառանոց դարձնելու մասին ուսումնական ապ-րանքների համար ուղղակի ամօթ է: Եթէ մի-չեւ անգամ մենք տէր դառնայինք ամբողջ Չի-նաստանին՝ նոյն իսկ այն ժամանակ մենք չէինք կարողանայ դարձնել նրան վաճառանոց «հայրենի» արդիւնաբերութեան արտադրու-թիւնների, որովհետեւ դրա համար մեզ հար-կաւոր կը լինէր ամենից առաջ փակել օտար-ների առաջ այն նաւահանգիստները, որոնք բայց են նոյն իսկ չինական այժման կառավա-րութեան օրով:

Երկր կարող ենք մենք անել Չինաստանում քաղաքակրթական-տնտեսական ասպարէզում: Բացարձակապէս ոչինչ: Մենք մեր տանը հար-կադրված ենք աշխատել համարեա միայն օ-տար դրամագլուխներով, մենք մեր տանը չենք կարողանում ստանալ բաւականաչափ քանա-կութեամբ եւ փողը ի շատէ է ժան գնելով ա-ռեւտրական երկաթ, մենք ինքներս ենթակի-վում ենք պարբերական սովորի եւ ստիպված ենք ահագին զինուորական ուժեր պահել ա-րեւմտեան սահմանը պահպանելու համար—ու-րեմն ինչ կարող ենք անել Չինաստանում: Չէ որ չինացիները սովորել են օտարերկրեայ է-ծան ապրանքների, որոնք ամեն տեղ դուրս են մղում չուկայից թխնոց ուսումնական: Ի՞նչ կարող ենք մենք անել այդ միջոցաւոր, մեզ համար օտար եւ սրտի խորքից մեզ ատող մարդկանց, այն մարդկանց, որոնց գլուխները սկսել են աստիճան մտածել սեփական «սոցիա-լական» հարցի մասին:

«Խօսել Չինաստանի բաժանման մասին—ուղ-ղակի անստույգութիւն է. բաժանել 400,000,000 բնակիչ ունեցող մի երկիր այնպիսի պետու-թիւնների մէջ, որոնք ստիպված են միմեանց դէմ պաշտպանելու համար ամեն միջոց ձեռք առնել, նոյնքան հեշտ է, որքան լողալ ու անց-նել ովկիանոսը լի ու լի բեռնաօրոված փոքրիկ նաւակով: Միմեա անգամ այնպիսի փոքրիկ ազգի բաժանման պատմութիւնը, որպիսին լե-հական ազգն է, չէ վերջացած մինչեւ հիմա, այն ինչ լեհացիները մի եւ նոյն ցեղի, իսկ ուսմաների հետ նոյն իսկ մի եւ նոյն ծագումի պատկանող մարդիկ են:

Մենք չարունակ աշխատում էինք ցոյց տալ եւ ապագայանել, որ մեզ անկարելի է եւ չը պէտք է գնալ Պեկին: Չինաստանը մեզ այժմ հարկաւոր չէ, մեր միակ քաղաքականութիւնը պէտք է կայանայ նրանում, որ պաշտպանենք հեռու արեւելքում մինչեւ այժմ ձեռք բե-րածներս եւ արկկցութիւն ցոյց տանք, եթէ այդ հարկաւոր կը լինի, Չինաստանի իսկական քաղաքակրթութեան գործին: Ռուսաստանը միաւր ձեռք պետութիւն է եւ բառացի եւ փոխաբերական մտքով, այսինքն մեզ ամեն-ւին հարկաւոր չէ ուրիշ երկրներ եւ մենք բա-ւականաչափ ուժեղ ենք, որպէս զի չը վախե-նանք որ եւ պետութեան ուժեղանալուց, լինի այդ ուժեղացող արեւելքում, թէ արեւ-մուտքում: Երկրորդ Եւրոպայի կամ Անգլիայի զօրութեան աճումից բոլորովին անհիմն է, ո-

րովհետեւ ազատվել այդ երկրից մենք կը կարողանայինք միայն այն ժամանակ, եթէ յաղթական պատերազմ մղէինք այդ պետու-թիւնների դէմ եւ ոչ թէ Չինաստանի:

Այժման չարժուած չինական ժողովրդի մէջ ծագել է բոլորովին հասկանալի եւ հեշտ բա-ցատրելի պատճառներով. նա ինքն ըստ ինքեան կը վերջնապէս այն տնտեսական ճգնաժամի հետ, որի մէջ գտնվում է այժմ Չինաստանը: Ով որ ներմուծել է այդ երկրը ափիսն եւ մաուզէ-րեան հրացաններ, թող նա էլ ստանայ հա-տուցութիւն, իսկայնորութեան աստիճանի հաս-րած ժողովրդից, որ սկսում է կրակ թափել այդ նոյն հրացաններով իրան թունաւորողների վրա: Մենք հաւատացած ենք, որ եւրօպական պետութիւնները կատարեալ աղողութեամբ դուրս կը գան այժման ընդհարումից եւ նը-րանց համար դա մի լաւ դառ կը լինի կամ մի ժամանական հատուցումն իրանց գործած բոլոր չարիքների համար:

Վերանդը Ռուսաստանի համար ոչ թէ նը-րան է, որ պետութիւնները չափազանց ու-ժեղանում են հեռու արեւելքում, այլ նը-րան է, որ մենք չափազանց քիչ ընդունակու-թիւն ունենք արցնելու այդ պետութիւնների հետ քաղաքակրթութեան ասպարէզում: Եւրօ-պան իր արամադրութեան տակ ունի ոչ միայն ակնաւոր եւ զրահաւոր նաւեր, այլ եւ ահա-գին առեւտրական նաւատորմ. նա կարող է կրել իր նաւերով ոչ միայն «թիւղանօթիւն», այլ նաեւ ուրիշ տեսակի ապրանքներ. նա կը կարողանայ լուծել այժման դժուարութիւնե-րը եւ «վերականգնել օրինական կարգը» Չի-նաստանում: Հարկաւոր է միայն վերադարձնել դաժը երիտասարդ կայսրին, բարձրացնել չի-նական լուրիների բանուորավորքը, ջնջել ման-դարինատը—եւ Չինաստանը մեծ արագու-թեամբ առաջ կը գնայ քաղաքակրթական զար-գացման ճանապարհով: Կրկնում ենք, իրերի ընթացքը ստիպում է Ռուսաստանին հետեւել ձեռք բերված արդիւնքների պաշտպանութեան քաղաքակրթութեանը եւ չը խառնվել չինա-կան ժողովրդի հաշիւներին, որ նա ունի եւրօ-պացի վաճառականների հետ:

ՆԱՄԱԿ ՅԱՐԱՄԱՍԻՍԻՑԻՑ

Սեպտեմբերի 13-ին

Կրօնների պատմութեան միջազգային կոնգ-րէսի բանկէտին, որ տեղի ունեցաւ մի քանի օր առաջ Էյֆելեան աշտարակի առաջին յարկի վրա, ուսաց հիւրանոցում եւ որին մասնակ-ցում էին շատ նշանաւոր գիտնականներ, ինչ-պէս Ալեքսի Բելլի, Ֆրանսիական կոլլէժի պրոֆէսոր, Ալեքսանդր Բերտան, ինստիտուտի անդամ, Իլլիան Բոլանպարտ (յայտնի աղ-գադրագէտ), Բատիան, Կարրիէր, կոմս դը-Գուբերնատիս—յայտնի արեւելագէտ եւ Հռոմի համալսարանի պրոֆէսոր, եւրօպական գիտնական համալսարանների պատուիրակները, հրէական րաբունապետը եւ եւրօպական համալսարանի պատուիրակը, թուով մօտ 80 հոգի: Կոմս դը-Գուբերնատիս մի համակրական ցոյց արեց հայերի վերաբերմամբ եւ իր հեղինակաւոր կարծիքը յայտնեց հայ գրականութեան եւ պատմութեան վերաբերմամբ:

Պաշտօնական բաժանների եւ ճառերի ժա-մանակ՝ կոնգրէսի նախագահը, «Կրօնների պատմութեան գիտութեան պատկանելի պատ-րիարքը»—ինչպէս անուանեցին նրան գիտնա-կանները—Ալեքսի Բելլի առաջարկեց իւր-միջ ֆրանսիական հանրապետութեան նախա-գահի կենացը, որն ընդունվեց եռանդաւոր ծափահարութիւններով: Ապա նախագահն ա-ւելացրեց, որ ներկայ միջազգային կոնգրէսը, առաջին իր տեսակի մէջ, ըմբռնելով այն ա-հագին դերը, որ առհասարակ կրօնները խա-ղում են ազգերի եւ ժողովուրդների կեանքի մէջ, կամեցաւ կրօնների համեմատական ու-սումնասիրութիւնը իր զբաղմունքների առար-կայ չինել. այդ համեմատական ուսումնասի-րութեան նորից կոնգրէսը կը հասնի մի փա-ռաւոր նպատակի—ցոյց կը տայ մարդկանց, թէ որն է ամենամեղուր, ամենաբարոյական կրօ-նը, որ մարդկութիւնը պէտք է դառնէ եւ կը հաստատէ բոլոր ազգերի մէջ մի դիմաւոր կը-րօն, հաւատ—եղաբարոյութեան, մարդասե-րութեան, մարդկային համերաշխութեան կրօ-նը: Հեռագիտէ խօսք արվեց դանազան ազգերի եւ դաւանութիւնների ներկայացուցիչներին: Նօրվէգիացի մի հրապարակախօս, խօսք առնե-լով, ասաց, որ ինքն երջանիկ է, նախ՝ որովհ-ետեւ նօրվէգիացի է, որի է մի ազգի, որ ունի իրենց, Բիեղնսօնի պէս փառաւոր դա-ւաններ, երկրորդ՝ որ իրեն նօրվէգիացի,

մասնակցում է այսպիսի մի նշանաւոր կոնգրէ-սի, բարկացած այնքան նշանաւոր գիտնական-ներից: Դրանից յետոյ խօսելու հերթը հասա-լինձ, որ մասնակցում էի կոնգրէսին, իրեն-անդամ եւ այդ օր կարգացել էի կոնգրէսի նիստում մի գեկուցում բարձրների մասին:

«Ծշմարիտ չը գիտեմ ինչ կարող եմ խօսել ես, հայ մամուլի մի համեստ գործիչ—ասացի ես—այսքան ակնաւոր եւ հեղինակաւոր գիտ-նականների չըբանում, բայց կամենալով պա-տասխանել ի. նախագահի հրաւերին, ես եւս կը սկսեմ խօսքս այնպէս, ինչպէս սկսեց իմ յարգելի նօրվէգիացի կոլլէգը: Պարեն ասաց, բարդաւոր է, որ նօրվէգիացի է. լաւ, ուրեմն, ես եւս կասեմ, պարեններ, այստեղ միակ հայն եմ ձեր մէջ եւ բարդաւոր եմ ոչ թէ նրա հա-մար, որ իմ ազգն արտադրել է այնպիսի հան-ձարներ, ինչպէս Իսէնը եւ Բիեղնսօնը—ա-ւաղ, այդ բարդաւորութիւնից դեռ շատ հեռու ենք մենք—բայց որովհետեւ իրեն հայ մաս-նակից եմ այսպիսի մի նշանաւոր կոնգրէսի, ո-րի միակ նպատակն է եղբայրսիրութիւն, հա-մամարդկային համերաշխութիւն, սէր եւ յար-գանք դէպի ընկերը: Կարող եմ հաւատացնել ձեզ, ատիկաներ եւ պարեններ, որ հայ ազգն էլ, իրեն ամենահին քրիստոնէական մի ժո-ղովուրդ, չը նայելով իր կրած տանջանքներին, երջանիկ կը լինէր, եթէ մարդկութիւնը հա-մար դարգացման այնպիսի մի աստիճանի, երբ թուրքը, քրիւրը, որ այսօր կոտորում է հային, ինքը գար, ձեռք մեկնէր հային եւ սատը. Եոչ, եղբայր, ես իրաւունք չունեմ քեզ, իմ նմա-նիս, իմ ընկերիս պահել. ապրենք իրեն եղ-բայրներ: Յուսանք, որ կը հասնի այդ փառա-ւոր օրը, որ ներկայ կոնգրէսի վերջնական նը-պատակն է. բայց քանի որ այդ օրը դեռ շատ հեռու է, չը պէտք է մոռանանք, որ ձեզ, իւ-րեւ գիտութեան ջանքի վրա, բարոյական պարտաւորութիւն կայ դրված լուսաւորել այն չափը, որով մարդկութիւնը պէտք է ընթա-նայ դէպի այդ նպատակը, ձեր հեղինակաւոր ձայնով եւ գրչով ազդել հասարակական կար-ծիքի վրա բոլոր այն երկրներում, որոնց ներ-կայացուցիչներն էք դուք:

Իրեն պատասխան այս խօսքերին, լըս-վում են ծափահարութիւններ եւ ամեն կող-մից ձայներ. «պարեն, մեր ամբողջ համակրու-թիւնը չըլուսեւ եւ արժանաւոր հայ ազգին, ողջունում է ձեզ գերմանացին, ողջունում է ձեզ հօլանդացին, ողջունում է ֆրանսիացին, ողջունում է եւրօպացին, ողջունում է սպա-նիացին, ողջունում է պորտուգալացին»:

Երբ աղմուկը դադարում է, նախագահը յայտնում է, որ կոմս դը-Գուբերնատիս խօսք է խնդրում պատասխանելու իմ ձայնին:

Պատկանելի ծերունի գիտնականը, որին ունկնդիր են կոնգրէսիաները խորին լուս-թեան մէջ, ասում է. «Տիկիւններ եւ պարեն-ներ, մեր յարգելի կոլլէգի, հայ ազգի մի ներ-կայացուցիչ խօսքերը վստով եւ թախծով լը-րին մեր ամենքս օրտեր եւ ես, հաւատացել եմ, ձեր ամենքից անկեղծ զգալմունքների թարգման հանդիսացած կը լինեմ, արտայայ-տելով, յանձին պ. Առաքելեանի, այն ջերմ հա-մակրութիւնը, որ մենք, գիտութեան մշակ-ները, զգում ենք դէպի մի ազգ, որ այնքան անօրինակ համբերութեամբ տանում է սար-սափելի տանջանքներ, ի մեծ ամօթ մեր քա-ղաքակրթութեան: Շատ ցաւալի է, որ այդպի-սի մի հին եւ քրիստոնէայ տղի պատմու-թիւնն ու գրականութիւնը, որոնք շատ կող-մերից կարող են հարուստ նիւթ հալթալթել գիտութեան համար, դեռ անձանօթ են մնացել Եւրօպայի եւ այդ երկրից բարոյական պար-տաւորութիւն կայ հայերի վրա ծանօթացնել մեզ գնալան հրատարակութիւններով իրանց գրականութեան եւ պատմութեան, ժողովրդա-կան աւանդութիւնների եւ երգերի հետ. բայց մեզ, գիտութեան գործիչներին վրա էլ բարո-յական պարտաւորութիւն կայ ծանօթանալու այդ գիտի հետ, ազգի, որ լինելով արեւական ծագումից, ընդունակ է քաղաքակրթութեան եւ զարգացման: Առաջարկում եմ խմել հայ ժողովրդի կենացը»:

Այս բաժակը եռանդաւոր ծափահարութիւ-ններով ընդունվում է: Պէտք է ասեմ, որ Կար-րիէր յայտնի հայագէտը այդ օր, մի մասնաւոր խօսակցութեան մէջ, նոյնպէս ցաւ յայտնեց, որ մինչեւ այսօր չը գտնվեց մէկը հայերի մէջ, որ գրէր հայոց եկեղեցու պատմութիւնը, եւ ծանօթացնէ եւրօպացիներին այդ եկեղեցու անցեալի հետ: Այդ խօսքերը պ. Կարրիէր ա-սեց այն առիթով, որ կոնգրէսի փակման օրը, կոմս դը-Գուբերնատիս, որն արտասանեց փակ-ման ձառը, ահալին նշանակութիւն տուեց դի-

տութեան եւ քաղաքակրթութեան տեսակէտից այն եկեղեցիներին, որոնք ցողացել են իրանց մէջ ազգային ստեղծագործութեան ոգի, կրել են բուն ժողովրդական բնաւորութիւն: Արդ, հայոց եկեղեցին, ինչպէս յայտնի է, պատկա-նում է այդպիսի հազուադէպ եկեղեցիների թւին:

Մի այլ համակրական ցոյց հայերի վերաբեր-մամբ տեղի ունեցաւ սեպտեմբերի 12-ին, «Ժողովրդական աւանդութիւնների միջազգային կոնգրէսի» պատուի տուած բանկէտի եւ դրա-կան-երաժշտական երեկոյթի ժամանակ: Բան-կէտ կազմակերպողները խնդրել էին պ. Ար-չակ Չօբանեանից մտցնել երեկոյթի մէջ եւ հայկական ժողովրդական երգերի բաժին, ի նկատի ունենալով, որ հայոց երգերի լուսա-բանութիւնն եւս կոնգրէսի զբաղմունքի առար-կայ էր դարձել, եւ. դիտարկ Ալօլէյ, Պարիզի անթրօպօլոգիական ընկերութեան անդամ, ֆո-նօգրաֆի միջոցով ծանօթացրեց կոնգրէսին «Երեւանի» երգի հետ: Երգիչ Ամիրեան յանձն էր առել երգել մի քանի ժողովրդական երգեր: Բանկէտին եւ երեկոյթին ներկայ էին Եւրօ-պայի նշանաւոր ֆիլօսօֆիաները: Պ. Ամի-րեանի երգած «Երեւանի» «Հայրենի-ջան» եւ «Պաղ-աղբիւրն» երգերը, որոնց ֆրանսերէն թարգմանութիւնը առաջուց կարգաց պ. Չո-բանեան, այնքան դուր եկաւ կոնգրէսիանե-րին, որ ընդարձակ դաշխիճը ոգեւորված, բուն ծափահարութիւնների հետ «կեցցէ» էր կա-նուում եւ կոմս դը-Գուբերնատիս բարձր ձայնով ասաց. «ես իրաւունք ունեի ասել, պ.պ. հա-յեր, որ անհրաժեշտ է ծանօթացնել Եւրօպա-յին հայ ժողովրդի երգերի հետ. vox populi, vox Dei»:

Հ. Առաքելեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Սօլբերիի չըբանական յայտարարագրից յետոյ՝ ուղղված Միացեալ Թագաւորութեան ընտրողներին, հրատարակվեց ազգային-ազա-տամական ֆիդելիտայի կոչը: Այդ գրու-թեան մէջ ազատամիտների միութիւնը բողոք է յայտնում պարամէշին արձակման դէմ, որ կողմի կերպով խախտում է սահմանադրական սովորութիւնները եւ գրկում է կէս միլիօնի չափ մարդկանց ընտրութիւնների մասնակցելու հը-նարաւորութիւնից: Ապա միութիւնը բացար-ձակ դատաւարտում է ունիօնիստներին նրա համար, որ արտաքին քաղաքականութիւնը վարեցին չափազանց անհիմաւ կերպով, իսկ ներքին քաղաքականութեան շրջանում՝ իրանց իշխանութեան ժամանակամիջոցը նշանաւոր կացուցին բոլորովին անտես անելով օգտա-ւէտ բարեփոխութիւնների մեծ մասը եւ ընդ-հակառակը՝ հասարակական գումարներից ա-ռաւ նուէրներ տուին լէւիզորդներին, հոգեւո-րականութեան եւ հոգեւոր դպրոցներին: Մենք հաւատացնում ենք,—ասված է ապա կոչի մէջ,—թէ Օրանիեան հանրապետութեան եւ թէ Տրանսիլաւի նուստումը վերջացած է եւ նրանց երկրները միացրած են մեր տիրա-պետութիւններին: Բայց միացնել երկրը այլ բան է, իսկ նրա մէջ կարգ հաստատելը—այլ: Մեր առաջ կանգնած է այժմ մի խնդիր, որ իր փափկութեամբ եւ դժուարութեամբ անելի խոյր է, քան պատերազմական գործողու-թիւնների վարելը: Նա կայանում է յաղթված, բայց քաջ ժողովրդին հաշտեցնելու մէջ: Նոր դրօշակի հետ եւ ազատ հիմնարկութիւններ հաստատելու մէջ այնպիսի մարդկանց համար, որոնք մինչեւ հիմա ոչ ոքից կայուն չուէին: Կարելի է արեւօք այդպիսի խնդրի լուծումն յանձնել մի կուսակցութեան, որ պահպանողա-կան աւանդութիւններ եւ իդէալներ ունի, մի կառավարութեան, որ ներկայ կայուն եւ ա-նուն ունի: Կարելի է արեւօք նրան յանձնել այնպիսի հարցերի վիճիւր, որոնք վերաբերում են զաղութիւնների մայր-երկրի յարաբերու-թիւններին: Երբեմնապէս մեզ պատահում է լսել ցինիքական կարծիքներ, թէ ազատամիտ կուսակցութեան բանը արժան է. Բայց քանի որ քաղաքային եւ գիւղական բանտարանների համար է ծանաղին բնակարանների հարցը չէ վճռված, քանի մեր հողատիրական օրէնսդրու-թիւնը չէ բարեփոխված, քանի արեւելգոլու-թիւնը ծաղկում է անարգել, քանի չէ տիրում լիակատար կրօնական հաւատարմութիւն, քանի պարամէշիսի դռները բաց կը լինեն միայն հարուստների համար, քանի անգլիական պէ-րերը հարաւորութիւն կունենան, ըստ իրանց ժամանօյթի, փոփոխի համայնքների վիճիւրները, մինչ այդ ժամանակ բաւականաչափ գործ կը լինի անգլիական ազատամիտ կուսակցու-թեան համար... Իւրաքանչիւր տեղ, որ կը խլվի տօրիները, մի գիւտ է ժողովրդական գործի համարը:

—Իրեն քաղաքային վարչութիւնը որոշեց մի նոր եւ ինքնատեսաւ գործի ձեռնարկել՝ չինի հասարակական արհեստանոցներ բա-նուորների համար: Ամենից առաջ քաղաքը ու-ղում է չինի արհեստանոցներ դերձակներ եւ կօշիկակարներ համար: Արհեստանոցի վարձք քաղաքը վերցնում է իր վրա, իսկ այն ծախ-

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская уд., № 27.